




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԴԻՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ


Գիտական, Գրագիտական, Առևտրագիտական.

և Մանկավարժական



1901 ԴԵԿՏԵՄԲԵՐ 20 — ԹԻԻ 7

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՆԱՆ





ՀԱՆՐԻՍ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

— هانراکيداق —
مجموعه علوم

HANRAKIDAGUE
JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 7

20 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1901



ԱՆՄԵՂ

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Գեղամ, հազիւ հինգ տարեկան, շիկահեր
Մանչ մը պրլուզ, վանդակին մէջ կը պահէր
Դիրգ երաժիշտ մը, ցայգերգող դեղձանիկ,
Անփոյթ, անմեղ կեանքին ընկերն եղջանիկ:

Առտու մ'ելաւ իր անկողնէն խնդագին,
Ու խայտալով երբ մօտեցաւ վանդակին,
— Մայրի՛կ, նըչեց, ո՛ւր է. չիկա՛յ իմ թռչնակ:
Ո՛վ, արդեօք, ո՛վ բաց է թողեր այս դռնակ:

Ու խեղճ Գեղամ հեկեկալով կ'արտասուէր,
Մասաղ, փափուկ սիրտը խոցուած կարելիք.
— Ինչո՞ւ համար, մայրի՛կ, մեր հայրըն Աստուած
Թռչնիկիս պէս ինծի թուեր չէ տուած:

Հիմա, ես ալ, տո՛ւս, բանալով իմ թուեր,
Կը թռչի մեր սանիքին փռէն վեր,
Ու թռչնիկիս պոչէն բռնած պինդ, խկոյն
Կը բերէի զանի կրկին ետ, մեր տուն:

* *

— Հայրի՛կ. ինծի չըսի՛ր դուն,
« Որդեա՛կ, եղիւ միշտ արքուն,
Հաւատարիմ եւ հրլու,
Փառանքերդ պահելու:

Անոնց դուն շատ լաւ հոգ տար,
Դեւեր, ցորեկ, անդադար,
Ու ոսկիներդ ինքնին
Անպատեհ լաւ կը պահուին »:

— Այո՛, ա՛յնպէս է, որդեա՛կ,
Իմ պատուէրս այդ է միակ.
Ձանա պահել զայն անխախտ,
Կը ժպտի օր մը քեզ բախտ:

— Ուրեմն, ինչո՞ւ, անցեալ օր,
Ըսե՛, հայրիկ, քու բոլոր
Ձիւ ոսկիներդ գրպանեդ
Նդան փակովդ անհետ:

* *

« Մայրի՛կ, ո՛ւր կ'երթան՝ երբ մեռնին մարդիկ,
Օր մը Սիրարփի հարցուց հանգարսիկ:
« Զեմ կ'ընար ըսել, հոգեա՛կ, նշու ո՛ւր,
Մայրն ըսաւ, հարցումդ խրթին է զրկուր: »

« Ի՞նչ կ'ըսես. մայրի՛կ, չե՛ս գիտեր. իրա՛ւ,
Դասրիկը գոչեց ձայնով մ'հոգեգրաւ:
« Այո՛, չեմ գիտեր, հաւատա՛ խօսքիս.
Նւ ի՞նչպէս կ'ընամ գիտնալ, սիրելի՛ս: »

« Բայց, կրկնեց դարձեալ, հարցուկը փոքրիկ,
Ասանկ բան կ'ըլլա՛յ, անուշիկ մայրիկ,
Կեանքիդ մէջ ամբողջ՝ չի կարդացի՞ր դուն,
Անգամ մը գոնէ, Աբխազագրութիւն »:

ԱԿԵՏԻՍ Կ. ԿԻՆՏԵՆԿԱՆ



ԱԶՆԻԻ ՏՂԱՆ

Երբ ես ալ ձեզի պէս պզտիկ դպրոցա-
կան էի, Վահրամ անունով ընկեր մը եւ.
Նէյր: Այս աղան տասը տարեկան էր եւ
բոլոր ընկերները դայն աղնիւ Վահրամ կ'ան-
ուանէին, որովհետեւ ընտա տատ մը չէր
խօսած:

Օր մը դպրոցին պարտէզին մէջ զրազած
էր կացինով վայր կտրելու երբ իր դաստի-
արակին կատուն անանկ մը մօտէն անցաւ.
որ կացինը դիտուն իջաւ եւ խեղճ Մինէ մե-
ռած ինկաւ: Հիմա ի՞նչ ընեմ. Վահրամ բո-
լորովին շուարեր էր: Կատուն դասատուին
սիրական էր, դասի ժամանակ իսկ կ'եր-
թար առոր ոտքերուն տակ բարձի մը վրայ
կը նստէր: Վահրամ կը դիտէր անշարժ
կենդանին. խոշոր արդունքներ աչքերէն կը
հոսէին. Ընկերները վրայ հասան եւ գործին
վերահասու եղան:

— Տեսնե՛ք ըսաւ անոնցմէ մին, Վահ-
րամ սուտ մը պիտի ըսէ՝ ինքզինքը արդա-
րացնելու համար:

— Անշուշտ ո՛չ, դոչեց պզտիկ Վահէ,
որ Վահրամի բարեկամն էր եւ կը նշանար
իր ընկերին վրայ անանկ կատկածներ լսե-
լով: Վատահ եղիր որ չպիտի ստէ. Վահ-
րամ երբեք սուտ խօսած չէ:

— Հիմա մտադործին շունը տեսայ, ը-
սաւ ընկերներէն մին, գիտէ՞ք որ Մինէի

հետ չատ աղէկ չէր, մեր դասատուին կը հատացնենք թէ ան է յանցանքը գործողը:

Այս առաջարկին ամէնքն ալ հաւանեցան. ասանկով Վահրամ ազատ պիտի ըլլար պատիժէ. բայց ինքը տարբեր կերպով ընդունեց այս համաձայնութիւնը:

— Բնաւ ատոր չեմ հաւանիր, գոչեց: Կը կտրծէք որ ինծի ստախոս անունը տալու գիջանիմ: Ստե՛լ, ո՛հ. երբեք, կրկնեց նա, մինչդեռ արցունքները կը հոսէին:

Յանկարծ աչքերը սրեց, բոլոր քաջասրտութիւնը ժողկելով կատուն դիրկը առաւ եւ դասարան գնաց ուր կը գտնուէր դաստիարակը: Ընկերները ետեւէն գացին, վախնալով Վահրամի կրելիք պատիժէն:

Ուսուցիչը գլուխը վեր առաւ:

— Ի՞նչ կայ, ի՞նչ է ատ, գոչեց յանկարծ, սիրական կատո՛ւս: Ո՞վ ըրաւ ատիկա:


Ոչ ոք պատասխան տուաւ: Վերջապէս Վահրամ ձայնը ամուր հանել ջանալով, եւ յուզումէն դրեթէ խեղդուած, պատասխանեց.

— Պարոն, շատ կը ցաւիմ եղածին վերայ. բայց չեմ կրնար ստել. ես սպաննեցի Մինէն. իրաւ է որ դիպումսով եղաւ, սակայն միշտ պիտի ցաւիմ եղած դժբաղդութեան համար: Ո՛հ, այո՛, շատ պիտի ցաւիմ: Եւ արտիկ տղան հեծկտալ սկսաւ:

Տղաքները կը կարծէին թէ ուսուցիչը պիտի բարկանար եւ կը ցաւէին Վահրամի վրայ որ իր ազնիւ բնաւորութեամբը ծանր պատիժ պիտի կրէր: Բայց շատ վարձացան երբ դաստիարակը ժպտելով ըսաւ.

— Բարեկամս, ազնիւ տղայ մը ես դու: Անկեղծութեան ասանկ ընտիր օրինակ մը զիս կը մխիթարէ հարիւր կատուի մահուան համար. կը պարծիմ քեզի պէս աշակերտ մը ունենալուս. Վահրամ, Գու ամէնէ մեծ վարձատրութիւնդ խղճիդ գոհ ըլլալն է, բայց իմ կողմէ ալ կը խնդրեմ որ իբր յիշատակ ընդունիս այս զմեռին որուն այնչափ կը փափաքէիր:

Վահրամ ուրախութենէն կարմրեցած, արցունքոտ աչքերուն ետեւէն կը ժպտէր եւ բառ չէր գտնէր ուրախութիւնը յայտնելու համար: Բոլոր ընկերները վազեցին ձեռքը սեղմեցին, ցունցելու համար որ ամէնքն ալ գոհ են խնդրին այս կերպարանքը առնելէն:



ԸՆՏՐՈՒԹԻՒՆ - ԲԱՐԵԿԱՄԻ

Սիրելի՛ որդեակ,

Անցեալ անգամ բարեկամ ունենալու համար տուած խրատներէս դուն իսկ կրնաս զգալ թէ՛ հաւատարիմ բարեկամը մեծ գանձ մըն է. բայց պէտք է նաեւ գիտնաս որ այսպիսի բարեկամ մը շատ հազուագիտ ու գտնալն ալ դիւրին բան չէ: Բարեկամի անունէն շատ բան չի կայ աշխարհիս մէջ, բայց անկեղծ ու ճշմարիտ բարեկամէն աւելի հազուագիտ բան ալ չի կայ: Ասոր համար ամէն նկատումներով՝ բարեկամի ընտրութիւնը մեծ ու դժուարին է: Ես ասիկա կ'ըսեմ, ո՛չ թէ միայն գտնելու դժուարութեան համար, այլ միանգամայն մեր վրայ ունենալիք ազդեցութեան նկատմամբ ալ, որովհետեւ գրեթէ բոլոր կենաց երջանկութիւնն ու դժբաղդութիւնը բարեկամի ընտրութենէն կախումն ունի. ընդհանրապէս մարդս անոր կը նմանի՝ որու հետ որ յաճախ կը տեսնուի. թէ որ ընտրութեանդ մէջ սխալիս, ու նենգաւոր. ամբարշտ մէկու մը հետ բարեկամութիւն հաստատես, քիչ ատենէն նոյն մոլութիւնները քեզի պիտի հաղորդուին, ատոր համար ընտրութեանդ մէջ մի՛ աճապարեր, լաւագոյն է սիրտդ ամենեւին ուրիշ մը չտալ, քան թէ անբարոյական մէկու մը հետ կապ ուիլ: Մէկու մը հետ սրտովին բարեկամութիւն հաստատելէ առաջ՝ զինքն լաւ մը քննէ: Թէ որ գտնես այնպիսի մէկը, որն որ ամէնուն սիրելի, բայց ինքն ամէնուն անձնամատոյց չըլլար, քաղցրաբարոյ, զուարթ, պատուաւոր է, ու իր արդարասիրութիւնն ծանօթ, վարքն ու բարքն անբասիր՝ ահաւասիկ այն է ճշմարիտ անկեղծ բարեկամն՝ զոր Աստուած քեզի կը պարգևէ: Այնպիսի մարդու մը հետ սիրով կապուէ, սիրտդ իրեն բաց ու ձախորդութիւններդ ու վիշտդ յայտնէ: Այսպիսի բարեկամութիւն մը, որ փոփոխակի ու մէկզմէկու համար ունեցած վստահութեան ու համարումի վրայ հիմնուած է, հաստատուն ու մշտատե կ'ըլլայ և երկուքներնուդ արեւջանկութեան պատճառ:



ԱԿՆՈՅԸ

Լեւոն շարունակ
Տան մէջ միայնակ,
Փակուած ամէն օր
Նեղուէր, քանի որ
Սորված չէր կարգալ:
— « Երեւմ ես տեսնեմ այն աղուոր մտաւ
(Ըսաւ ինքնիրեն),
« Որ մամս կարգար գրքի մը մէջէն: » —
Այս ըսաւ, զրնաց, բացաւ գրգորցը,
Փրնտընց գիրքը, զըրաւ իր ծոցը,
Յետոյ դառնալով նայեց, բայց ի զո՛ւր
Գիրքը թողնատեց, չէր գիտեր թէ ո՞ւր
Փրնտընէր գանի. սեւուլիկ, ճերմակ
Բաներ մը տեսներ, տեսակ ու տեսակ:
— « Դրոտյ պատճառը, ո՞հ, ըսաւ յանկարծ
« Մեծ մայրիկիս պէս չեմ ականոց զըրած: » —
Առաւ իւր մամուն ականոց մեծկակ
Որ քիթըն ամբողջ կը ծածկէր համակ,
Թաշկինակովն ալ սըրբեց մի անգամ
Երկու ապակին, տարաւ շատ խընամ,
Թուղթ մըն ալ դարձուց. դիտելով մէյ մ'ալ
Յուսախարութիւն, չի գտաւ մասալ:
Հասնելով մայրը, դարձաւ ու ըսաւ,
— « Մամային աչք'ըրն ունին մեծ ցաւ,
« Հիւանդութիւնդ ալ՝ այն է որ ծոյլ ես:
« Ըսաւ մայրն, ունի՞ս խօսելու երես,
« Այս օրէն ուխտէ յաճախ'ըլ զըպրոց
« Որպէս զի կարգաւ: չի զըրած ականոց: »
Թարգմ. ՇԱՀԱՆ
Նիկոմիդիա

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Ինչ որ յիշողութեանս մէջ, իմ ծննդա-
վայրիս հրապոյր կուտայ, այն տպաւորու-
թիւնն է՝ որ կը մնայ ինծի այն առաջին
զգացումներէն, որոնցմով հոգիս տոգորուե-
ցաւ, որոնք թափանձեցին անոր մէջ այն
անբացատրելի գորովը՝ զոր իմ ընտանիքս
ունէր ինձ համար: Եթէ նկարագրիս մէջ
ունիմ բարութիւն մը, կը կարծեմ թէ կը
պարտիմ զանի այս քաղցր յուզումներուն,
սիրելու և սիրուելու սովորական երջանկու-
թեան: Ա՛հ, ինչպիսի՜ նուէր մըն է զոր կ'ը-
նէ երկինք՝ երբ մեզի կուտայ բարի ծը-
նողք մը: Ես որոշած էի կարգալ փոքր վանք
մը կրօնուհիներու քով՝ որ մայրիկիս բարի
ընթացակարգի հիշողութիւնն էր: Հոտիէ անցայ դըպ-
րոցը քահանայի մը՝ որ ձրիաբար և յօժա-
լութիւնով ինքզինքը նուիրած էր տղաք-
ւերու դաստիարակութեան: Կօշկակարի մը

որդին, կօշկակար մը՝ որ աշխարհի ամէնէն
պատուաւոր մարդն էր, այս եկեղեցականը
որդիական երկիւղածութեան ճշմարիտ տի-
պար մըն էր: Դեռ մինչև հիմայ աչքիս առ-
ջեւն է այն փոխադարձ պատշաճութիւնը և
ականածութիւնը՝ զոր ունէին ծերը և որդին:
Առաջինը չմոռնալով երբէք քահանայու-
թեան արժանաւորութիւնը, և երկրորդը
հայրական նկարագրին սրբութիւնը: Այդ
դպրոցին մէջ ունէի ընկեր մը որ տղայու-
թենէս ի վեր ինծի համար մրցումի առար-
կայ եղաւ: Իր իմաստուն և ծանր դէմքը,
իր ուսումի համար ունեցած ջանասիրութիւ-
նը, այն խնամքը՝ իր գիրքերուն համար,
ուր երբէք արատ մը չէի նշմարեր, իր միշտ
լաւ սանտրուած խարտեաշ մաղբըր, զգես-
տը՝ իր պարզութեան մէջ միշտ մաքուր, իր
միշտ ճերմակ ճերմակեղէնը, ինծի համար
զգայուն օրինակ մըն էին, և հազուագիւտ
է որ տղայ մը յարգանքով վարուի, տղայի
մը հետ, ինչպէս որ ես կը յարգէի զանիկա:
Անոր անունը Տիրան էր: Իմ հօրս ծանօթ
էր. իր որդիին հետ պտոյտի կ'երթայի զա-
նիկա իր գիւղին մէջ տեսնելու համար: Մեզ
ինչպէս կ'ընդունէր անիկա, այս ալեհեր
ծերունին, աղուր սերը, կաթը, և հացը
զոր մեզի կուտար, և ի՞նչ երջանիկ գու-
շակութիւններ կը սիրէր տեսնել իր ծերու-
թեան համար տաճած յարգանքիս մէջ: Բը-
սան տարի ետք, մենք, իր որդին ու ես,
Բարիկ էինք շատ տարբեր ճամբաներու
վրայ տեսայ միեւնոյն նկարագրեր իմաս-
տութեան և վայելչութեան՝ զոր ունէր դըպ-
րոցին մէջ:

Թարգմ.

Մամոնթէլ

ԱՇՈՏ ՊԱՉՊԱՋԵԱՆ



ԽՍՐՀՐԴԱՒՈՐ ՈՍԿԻ ՄԸ

Պառնոտի Պըրտէթ Գուլիս հարուստ
Անգլուհի մ'է, և նշանաւոր կին, որ մեծ
զրամատուն մը կը կառավարէ, Միլիոնա-
տէր է, ոչ թէ զրուշով կամ Ֆրանքով, այլ
սթէրլինով: Եւ այս կին որ նախապաշա-
րում չունի գրէթէ, զի ուսեալ է, կը հա-
ւատայ որ իր գործոց յաջողութիւնը վերջ
պիտի գտնէ և իր հարստութիւն պիտի փը-
ճանայ եթէ ձեռքէ հանէ անգլ. ոսկի մը
(կինէ) որ հետաքրքրաժաւ կերպով իրենց

ընտանեաց սեփականութիւն եղած է։ Այս մեծ հարստութեան հիմնադիրն իր մեծ հայր, Պ. Քութս, իր հագուստին ու կապուստին հոգ չէր ընէր։ այնպէս որ բարեսիրտ Անգլիացի մը, օրին մէկը, խղճալով այս մարդուն կերպարանքին, և կարծելով թէ անկեալ խանութպան մըն է, կը հանէ կիսէ ոսկի մը (20 շիլին) կը սահեցնէ անոր ձեռքին մէջ։ Բայց Պ. Քութս սեղանաւոր մըն էր, և հետեւեալ օրն այն բարեսիրտ Անգլիացին բարեկամի մը տունը ճաշած ժամանակ իրեն սեղանակից կը գտնէ նոյն անձն որուն օր մը առաջ ոսկի մը ողորմութիւն տուած էր։ Պ. Քութս զուարճութեան համար կը յայտարարէ թէ իրեն տրուած ոսկին ետ չպիտի վարձնէ, արտասովոր բարիտ մը, անակնկալ շահ մը նկատելով զայն։ Իր մահէն ետքը ոսկին կ'անցնի իր աշխի կնոջ, այն ալ իր փեսին կ'ուտայ, և այսպէս կ'անցնի հանգուցելոյն թոռան, որ իրենց գերդաստանին հարստութեան պատմութեան մէջ ամէնէն հետաքրքրաշարժ առարկայն՝ երկիր զաւթութեամբ կը սահէ զայն։

Գ Ե Ղ Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Տ Ղ Ա Յ Ք

Ա Ն Յ Օ Ն Ք Ա Ն Օ Վ Ա

Շատեր տեսնելով որ աննշան ու աղքատ վիճակի մէջէ որքան խելացի մարդիկ երևան կ'ենեն, և ինչ աստիճան ալ կը բարձրանան, ուստի իր հասուն տարիքէն առաջ խելացի ճանչցուած տղայ մը տեսած ատեննին միշտ կը զրուցեն. «Ամենեւին աշխատութենէ մի՛ յուսահատիր, քեզի անպարկեշտ ճամբայ ցոյց տուող ձայնին ահանջ մի՛ կախէր, քու բնական յօժարութիւնդ քեզ ո՛ւր որ առաջնորդէ՝ գնա՛»։ Բայց, աւա՛ղ, փառաց կատարն հասցընող բազմալուսանգ ճանապարհին մէջէն թէեւ յաջողութեամբ անցողներ եղած են, բայց շատեր ալ եղան, որ ուժաթափ եղան. ուստի՝ «գնա՛, կը հասնիս» ըսել ալ չըլլար ամէնուն։

Պա տմուլիքս այն նորստահամանեալներէն մին է, որ յաջողութենէ յաջողութիւն կը հասնին։ Երբեմն հարստութիւն կ'ենէ գիմացնին, եւ եթէ մի քիչ ալ յառաջ երթան փառք ու պատիւները, վերջապէս շատերուն դժուարութեամբ ձեռք բերած արհեստից բաղմարկածեան ճանապարհին ծայրն ալ անմահութիւնը կ'ենէ գիմացնին։

Անուանին Անտոն Քանօվա, 1747ին ծընաւ Վենետիկի հին դքսութեան Փօսանեօ ըսուած գիւղը։ Յովհաննէս Ֆալիբի ատե-

նակալն այս գիւղին տէրն էր։ Ասի օր մը մեծածախ հացկերոյթ մը ընելով՝ սեղանը տեսակ տեսակ խմորեղէններ գալէն յետոյ, մեծ կարկանդակ մը բերին, որու վրայ կողիէ առիւծ մը կար խիստ վարպետաշէն։ Այս բանը թէ՛ պարոն Ֆալիբին և թէ՛ կոչնականները զարմացուց։ Կանչել տուաւ խոհարարն որ հանգիսականաց առջև գովէ զանի, որովհետեւ շատ հաւնեցաւ անոր հրաշակերտ շինուածքին։ Խոհարարը երբ սըրահէն ներս մտաւ. սկսան յանձնափա գովել զինքն, որ աչքերէն արտասուք գալ սկսաւ։

«Ուրախութենէդ կուլաս, այնպէս չէ՞, ըսաւ Պ. Ֆալիբի։

— Ո՛չ, Տէր իմ, յուսահատութենէս կ'արտասուեմ, պատասխանեց խոհարարը, որ զիս այսչափ մեծամեծ գովասանաց արժանի ընող գործը իմ շինածս չէ։

— Ո՞վ է տեսնեմ շինողը, ըսաւ Յովհաննէս Ֆալիբի։

— Բերեմ, Տէր իմ, ըսաւ խոհարարը. ու գնաց շուտ մը բերաւ շինողն, որ գրեթէ տասն տարեկան գիւղացի տղայ մըն էր. վրան գլուխը պատուտած, որովհետեւ աղքատի զաւակ էր, բայց իր բարի ծնողքը աղքատութեան նեղութիւնները քաշելու յանձնառու ըլլալով՝ աժան վարպետ մըն ալ գըտած էին, որ իրենց զաւակին գծագրութիւն սորվեցնէ։

Անտոն Քանօվա, փոքրիկ հասակէն ի վեր մեծ իղձ ու յարմարութիւն ունէր արձանագործութեան. ձեռքը քիչ մը կաւ անցածին պէս՝ գեղեցիկ արձաններ կը ձեւացնէր զանոնք ու փայտի կտոր մը՝ իր կոշտ գանակովը տաշելով՝ պատկերներ կը շինէր։ Անտոն Քանօվային ծնողքը Յովհաննէս Ֆալիբիի խոհարարին հետ բարեկամութիւն ունենալով՝ այն մեծ կոչունքին օրը, եկաւ խոհարարը հասկցուց որ մեծ մըտատանջութեան մէջ էր, սեղանին ամէն կերպով գեղեցիկ լինելուն համար պէտք եղածը պատրաստել չկարողանալուն։ Իր խելքին ու արուեստին բոլոր ճարտարութիւնները իգործ դնելով՝ աշխատէր, ու չէր կարողացեր կարգէ դուրս կերակուր մը պատրաստել, որ այսպիսի մեծ ապարանքի մը խոհարարին համբաւն աւելցնողն բանն է։

Անտոն Քանօվա՝ քիչ մը մտածելէ յետոյ ըսաւ անոր. «Ամենեւին հոգ մի՛ ըներ դու։

ես քու տեղդ կ'աշխատիմ սքանչելի կերպ-
կուր մը պատրաստելու համար» :

Հետեւեալ օրը եկաւ, ինչպէս խոստացեր
էր, ու իր շինելիքին նախագիծը տուա-
ցցունելով անոր՝ ապահովեց խոհարարն,
գործին յաջողապէս գլուխ ելլելուն : Ա-
ռաւ կտոր մը կոգի ու կովեց զանի այն-
պիսի վարպետութեամբ մը, որ այն փոր-
ձերը ժամանակէ մը յետոյ շինած մարմա-
րիոնէ արձանաց վրայ շատ անգամ ցցուց :
Կոչնականք առիւծին դէմքը տեսած ժա-
մանակնին որչափ զարմացան՝ շինող գիւ-
ղացին տեսած աստեննին ա'լ աւելի զարմա-
ցան ու շատ սիրեցին այս տղան :

Յովհաննէս Ֆալիրի՝ այն օրէն յետոյ
Քանովայի խնամակալ ըլլալով՝ խոստացաւ
զինքը վարպետ արհեստաւորի մը քով դնել :
Այս յաջող փորձը՝ Փօսանեօցի տղեկին ա-
նունն ամէն կողմ հռչակեց, որով նորա-
նոր յաջողութեանց շաւիղ մը բացուեցաւ ի-
րեն :

Ֆալիրի զանի Թօրթի անունով ծեր ար-
ձանագործի մը քով դրաւ, որ այն ժամա-
նակի խիստ անուանի արձանագործն էր :
Երկու տարիէն յետոյ՝ Անտօն Քանովա, որ
դեռ տասերկու տարեկան չկար, իր մեկե-
նասին երկու կողով մարմարիոնէ շինուած
պտուղներ զրկեց, որ մինչև ցայսօր վենե-
տիկի մէջ Ֆալիրիի պալատին պատշգամբին
զարդն եղած են :

Սոյն երեւելի ու անխոնջ արուեստաւո-
րին շինած զարմանալի գործերը պատմելն
աւելորդ կը համարինք աստ : Բոլոր գիտու-
թեան ճեմարաններ իրենց անդամ ընդու-
նեցին Քանովան : Բոլոր Եւրոպայի վեհա-
պետք իրենց տէրութեանց մէջի գեղար-
ուեստից ճեմարանները Քանովայի գերագանց
ճեռագործներովը զարդարելու փառքն ի-
րամէ յափշտակել կը ջանային : Պիոս է . Բոգ-
Պապը անոր անունն կապիտօլիոնի ոսկի
մատեանին մէջ արձանագրել տուաւ : Հռովմի
Ս . Ղուկասու ճեմարանն ալ մշտնջենաւոր
իշխան անուանեց զանի, և այս պատուոյ
մականունն իր վախճանումէն յետոյ ուրիշ
արուեստաւորի մը տրուած չէ : Իրեն յու-
ղարկաւորութեան հանդէսն այնքան փառա-
ւոր եղաւ, որ Ռափայէլի մեռնելէն մինչև
այն ատեն բնաւ մէկ արուեստաւորի մըն ալ
այնպիսի յուղարկաւորութիւն չէր եղած :

ՄԵՄՆԱՂ ԹԷ ՄԱՆՈՒԿ ՄՆԱԼ

Մեր ուսուցիչը այս շաբթու մեզի կար-
դաց « Հանրագիտակ »-ի մրցման դրած սա-
նիւթը « Կուզէ՞ք շուտ մը մեծնալ, հայրի-
կին պէս ըլլալ, թէ ոչ տղայ մնալ աւելի
լաւ կը սեպէք . ինչո՞ւ համար » : Ոչ թէ
նուէրէն շացած պիտի ջանամ գրել,
գաղափարներս գրի առնել, այլ որովհետեւ
մեր ուսուցիչը մեզի շատ անգամներ կըրկ-
նած է թէ գրելը շատ լաւ բան է, և ես
ալ այդպէս կը խորհիմ :

Մեծնալ թէ մանուկ մնալ . եթէ այս
հարցումը ընենք մենէ շատ պզտիկ տղայի
մը, անշուշտ պիտի վարանի պատասխանե-
լու : Երբ անիկա կը տեսնէ իրմէ շատ մե-
ծերը, որ կը գրեն, կ'աշխատին, կը գոր-
ծեն, որ իր ամէնէն հաճելի առարկաները
կը բերեն, պահ մը ինքն ալ կ'ուզէ մեծ ըլ-
լալ, պիտի ունենալ, սիկար ծխել, օդի
խմել, այս փափաքը կը տեսնուի գրեթէ
ամէն մանուկներու քով, և մենք ալ երբ
պզտիկ էինք նոյն փափաքները ունեցած
ենք : Կը յիշեմ որ մեր պզտիկ եղած ատե-
նը յարդի շիւղեր կառնէինք, անոնց ծայրը
կը վառէինք և կը ծխէինք... Իբր մեծ
մարդեր . արդէն ասիկա չը ցցունէր որ մա-
նուկներուն մէջ մեծ ըլլալու փափաք մը
կայ . սակայն ուրիշ կողմէ, մանուկը կամ
փոքր պատանին չուզեր թողուլ իր խաղա-
լիկները, իր քաղցրիկ մանկութիւնը որու
չուրջ շատ մը հոգիներ կը թրթռան, որու
վրայ կը գուրգուրայ սիրատոջոր ծնողք մը,
ընտանիք մը ամբողջ : Եւ որովհետեւ մա-
նուկը խիստ փոփոխական է, միշտ կը փոխ-
ուի նման մատաղ տունկի մը որ թեթեւ հո-
վերէն իսկ ասդին անդին կը շարժի, ան-
գամ մը կուզէ մեծ ըլլալ, և կը նայիս որ
ուրիշ անգամ չուզեր թողուլ մանկութիւնը :

Ես սորված եմ թէ բնութեան մէջ ամէն
բան աստիճանական զարգացում մը ունի .
կը տեսնեմ որ սա ահագին ծառը աստիճա-
նապէս զարգացած է . անիկա առաջին ան-
գամ հունտ մըն էր, յետոյ ուռճանալով ծիլ
մը եղաւ, ծիլը տունկ մը, տունկը մեծնա-
լով պզտիկ ծառ մը, և ասիկա ալ աւելի
մեծնալով հիմա առաջ եկած է այս ծառը .
կը տեսնեմ որ սա մեծ մեծ մարդերը ասկէ
շատ տարիներ առաջ մեզի պէս պատանի-

ներ եղած են, եւ ես կ'եզրակացնեմ թէ բընութեան օրէնքն է աստիճանական զարգացումը, ուստի կ'ուզեմ հպատակիլ այս օրէնքին: Ասկէ քանի մը տարիներ առաջ պեզտիկ տղայ մըն էի, այսօր քիչ ու շատ խելահաս պատանի մըն եմ, և Աստուծոյ յառաջիկային մարդ մը պիտի ըլլամ: Այս մտածումով երբեմն կը տողորուրեմ, ինչպէս արդէն մեծ մարդ մը եղած կը կարծեմ, և իրօք ալ կ'ուզեմ մեծ մարդ մը ըլլալ: Մեծնալ, միշտ այս է փափաքս. և գիտէ՞ք ինչո՞ւ համար մեծնալ կ'ուզեմ. շատ պարզ պատճառով մը: Ես գիտեմ թէ սա էջերը, կովերը, կենդանիները մէկ խօսքով կը ծընին. կ'ապրին, այսինքն՝ երկար տարիներ կեանք կը վարեն և կը մեռնին. ինչպէս որ աշխարհ եկան, կ'երթան առանց հետք մը թողելու. է՛հ կրնա՞մ ցանկալ անոնց կեանքին: Ես կուզեմ մեծնալ՝ օգտակար լիլալու համար ինձի եւ իմ նմաններու: Եթէ երբ մեծնամ անօգուտ, անպիտան անձնաւորութիւն մը պիտի ըլլամ. որով ինձի և ուրիշներուն օգուտ մը չունենալէ զատ, անոնց ալ բեռ պիտի լիլամ, թող բնաւ չմեծնամ, մանուկ, պատանի մնամ: Ահա թէ ինչպէ՞ս կ'ուզեմ մեծնալ, և ինչո՞ւ:

ԳԵՌՐԻ Յ. ՈՒՐՅԱԼՆԱՆ

Այլ. Սահակեան վարժարանի Դ. կարգի Աֆիոն Գարահիսար

Մոյն պատասխանը հրատարակելու առթիւ զարմանքիս մեծ եղաւ, երբ աչքի առջեւ բերինք Մայրաքաղաքիս հազարաւոր դպրոցականները, որոնցմէ եւ ոչ իսկ տող մը պատասխան առնելու քաղցն ունեցանք մինչեւ այսօր, մինչդեռ գաւառի վարժարանի Դ. կարգի ուսանող մը այսքան կոկիկ ու գեղեցիկ պատասխան մը տուած է: Կ'երեւի թէ մեր դպրոցականները աւելի բարձր գիտական հարցերով կ'զբաղին ինչպէս որ իրենց տնօրէններն ալ քաղաքականութեամբ ու Աւետարանի Թարգմանութիւններու խնդիրներով: Չինք կարծեր թէ մեր հրատարակած Թերթին կարեւորութիւն չտալով է որ Պոլսոյ դպրոցականները պատասխան մը խրկել չեն համար, հապա վստահ ենք որ այդ պատանիները համոզուած են իրենց անկարողութեան՝ պատասխանելու ասանկ լուրջ հարցումի մը, քանի որ ատով երեւան պիտի ելլէր իրենց գաղափարները՝ դպրոցականի ու մեծ մարդու մը վրայ եւ պիտի մասնուէր իրենց նկարագրեր:



ՊԱՐՈՆ ԺՈՒՄՊՈՒ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

ՆՈՐ ԳԻՒՏՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Պրն. Ժումպօ և Տիկինը կ'ապրէին Հնդկաստանի մեծ ու գեղեցիկ գաւառներէն մէկուն մէջ, ուր քօքօի ընկուզենին, արմաւենին, եփենոսը, պամպուները և ուրիշ խոշոր ծառեր՝ ընդարձակ անտառներ կը ձեւացնէին: Երբ ծառերու շուքին տակ պտըտկելէ կը յոգնէին, կ'երթային մարգագետիններու մէջ փոքրերին կշտացնել համեղ ու գեղեցիկ խոտերով: Իրենց դրացիներն էին վագրը, առւծը, յովազը, կարծը, բայց իրենց մորթը այնչափ կարծր էր որ ասոնց և ոչ մէկին խածուածքը բանի տեղ չէին դնէր, հետեւաբար համեղաշի կեանք մը կը վարէին անոնց հետ:

Պրն. Ժումպօի նախնիքը (ըսողը ինքն է) հին Հնդկներէն իբր աստուած պաշտուած էին: Ասիկա ալ մեր պարոնին պարծանքներէն մին էր. ամառ իրիկունները երբ շուքը նստած կ'նսջնէ հետ կը խօսակցէր՝ կ'ըսէր անոր:

— Ամէն բան կ'ապականի. առաջները մեզի համար տաճարներ կը շինէին, սպասաւորներ կ'ունենայինք մեզի ծառայելու համար, բայց հիմա անտառներուն մէջ կը բնակինք և կերած խոտերնիս մենք կ'երթանք կը քաղենք:

— Ես չեմ գանգատիր, կ'ըսէր Տիկին Ժումպօ, իմ ուտելիքս ես անձամբ պատրաստելու շատ ուրախ եմ. գէթ սրտիս ուզածը կ'ուտեմ:

Այսպէս խօսելով պատիճը երկնցուց եւ թէյի տուակի մը տերեւները մէկիկ մէկիկ սկսաւ ուտել (փիղերը կանաչ թէյը խաշածէն նախաձեռար կը համարին):

— Մանաւանդ որ, շարունակեց, դիմացս շարուած տասը սպասաւորները սիրտս պիտի նեղացնեն:

Պրն. Ժումպօ հառաչեց, երբէք չէր կըրցած փառասէր գաղափար մը խոթել կնոջը գլխուն մէջ:

Այսպէս անուշ անուշ կը խօսէին երբ սուր ձայն մը սարսուցուց բոլոր մարմիններն: Տիկին Ժումպօ վազեց գլուխը մացառներուն մէջ ծածկեց, մինչդեռ պարոնը տեղէն վեր կը ցատքեր:

Երբ աղմուկը դադարեցաւ երկու ամուսինները իրար մօտեցան :

— Որո՞ւնն է այս սոսկալի ձայնը, հարցուց Պ. Ժումպօ, անշուշտ ահագին գազան մըն է որ եկած է մեր դաշտերուն մէջ բռնակիլ, աղէկ խոտերը իրեն զատել, նոր ծիւերը ուտել :

— Կարծեմ, ըսաւ Տիկինը խորհրդաւոր ձայնով մը, ասիկա մարդերուն մէկ նոր հրահարքն է : Երբ անցեալ օր աղբիւր դացի, կապիկի մը հետ տեսնուեցայ . պզտիկութեանը մարդերուն ձեռքն է ինկեր բայց յաջողեր է փախչիլ : Շատ զարմանալի բաներ պատմեց անոնց վրայ . տեսակ մը նոր ձիւաղ հնարած են եղեր որ մուխ ու բոց


— Ե՛ս, ես չեմ վախնար անկէ, և տես թէ ինչ կ'ընեմ, պիտի արգիլեմ որ մէկ մըն ալ մեր հողերը չի մտնէ : Եթէ պէտք ըլլայ կը ցուցնեմ անոր թէ այստեղի տէրը ես եմ : Յաջորդ օրը պամպուկի մը ծայր գամուած էր տախտակ մը որու վրայ գրուած էր .

« Դաւթին մեջ մտնելը արգիլեալ է .

Անաստոյր տուգանքի կը դատապարտուի : »

Նոյն իրիկունն իսկ, նորէն սուլելու ձայնը առնուեցաւ : Պն. Ժումպօ՝ որուն եռանդը չէր մարած, ձայնին կողմը սրացաւ : Պարապ տեղը Տիկինը իր պատիճը անոր վիզը փաթթեց, պարապ տեղը քաղցր խօսքերով բարկութիւնը իջեցնել ջանաց :

— Իմ նախահայրերուս սպասաւորները՝



կը շնչէ, և անանկ շուտ կ'երթայ որ անկարելի է իրեն հասնիլ, ձայնը՝ մեր իմացածին պէս սուր է եղեր : Անշուշտ այս անցածն ալ անանկ կենդանի մը ըլլալու է :

— Մարդուն շինածէն ես չեմ վախնար, գոչեց Պն. Ժումպօ քաջաբար : մարդիկներէն վախնա՛լ, այդ երկոտանիներէն որոնք ոչ պատիճ ունին ոչ ալ երկայն աւուայ . ի՞նչ կրնան ընել ատոնք :

— Բան մըն ալ չեն կրնար ընել, պատասխանեց Տիկինը երկչոտութեամբ, բայց խոհմութիւն է այդ գազանը անցած ատեն քիչ մը հեռուն պահուրտիլ :

ամէնէն հարուստ մարդիկն էին, ըսաւ անուական փիղը, չպիտի ներեմ որ գձուճ արարածներ իմ բնակարանս մտնեն : Տեսնենք հիմա թէ այդ գազանը պիտի համարձակի՞ ինձի դէմ ելլել :

Տիկին Ժումպօ փորձով գիտէր որ, երբ ամուսինին գլուխը դառնայ՝ բան մը մտիկ չընէր :

Նորէն սուլելու ձայն մը լսուեցաւ, առաջինէն աւելի սոսկալի, և դաշտին ծայրը ելեցաւ սեւ գազան մը, որ բոց ու ծուխ փչելով կը յառաջանար : Տիկինը բոլոր ուժովը վազեց փախաւ, իսկ ամուսինը սպա-

սեց աներկիւղ: Պզտիկ կապիկ մը ճիւղի մը վրայ կախուած՝ վախէն ու սքանչացումէն կը դողար: Ծիւաղը միշտ կը յառաջանար. Պր. Ժումպօ տեսաւ որ իր գործը չէ ասանկ ահագին անասունի մը դէմ ելլել, կըռնակը դարձուց և սկսաւ փախչիլ. պարսպ տեղը կը վազէր, շատ շուտով զգաց ահագին կենդանիին այրող մարմինը (երկաթուղին վրան հասած էր) և հին աստուածներու ընտանիքէն սերող փիղը, ինքզինքը գազանէն փրկելու համար սոսկալի գործիքին կառչելէ զատ ուրիշ միջոց չգտաւ: Ծիւաղային մեքենան քչեց տարաւ զինքը բաւական ատեն, երբ դիպաց Պն. Ժումպօի վերայ, ընթացքը կամացցուց, մինչեւ որ խեղճ փիղը յարմար դատեց կողմնակի ուտումով մը վար ցատքել, և գնաց մխիթարել իր սիրականը որ արդէն սուգի պատրաստութիւններ կ'ընէր:

Թաջորդ օրը նոր տախտակ մը գամուեցաւ պամպուին ծայրը սա խօսքերով:

« Վարձու ստացուած »

Թարգմ.

ՁԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՁԱՆՈՐԾ ԵՒ ՃԱՄԲՈՐԴ

Ժամանակով մարդ մը կար, որուն ամբողջ հարստութիւնը փոքրիկ գետակի մը եզերքը գտնուած խեղճ և աղքատիկ խըրճիթ մըն էր, իր ապրուստը ձկնորսութեամբ կը հոգար, բայց և այնպէս մեծ քանակութեամբ բան մը չէր ստանար, այլ քիչ մը հացով և քիչ մը ջուրով կ'ապրէր, սակայն իր աղքատութեան մէջ կրկին գոհ էր, որովհետեւ իր ունեցածէն աւելի բանի մը չէր բաղձար: Օր մը քաղաք տեսնելու բաղձանքը ունեցաւ, և երբոր հոն երթալ կը խորհէր, ճամբորդ մը հասաւ և ձկնորսին հարցուց թէ՝ « Գիշերը անցնելիք գիւղը շատ հեռո՞ւ է »: — Հոն հասնելու համար վեց միոն կայ, պատասխանեց ձկնորսը, շատ ուշ է, եթէ կուզէք այս գիշեր իմ տնակիս մէջ անցուցէք, հրամայեցէք, ձեզի մեծ հաճութեամբ կ'ընդունիմ: Ծամբորդը հաւանութիւն տուաւ այս բանին: Զկնորսը՝ որ զայն կերակրել կուզէր, կրակը վառեց որ վրան քանի մը ձուկ խորովէ, ձուկը խորոված ա-

տեն կը խնդար, կ'երգէր և խիստ գուարթ բնութեան տէր մարդ մը կ'երեւէր: « Ի՞նչ երջանիկ էք ըսաւ հիւրը, բոլոր ունեցած ստացուածքս կուտայի ձեզի չափ գուարթ ըլլալու համար »:

— Ձեզ ո՞վ կ'արգիլէ, ըսաւ ձկնորսը:

— Իմ ուրախութիւնս ոչինչ է, ըսաւ հիւրը:

— Մեծ վիշտ մը ունի՞ք, հարցուց ձկնորսը, որ ձեզ կ'արգիլէ զբօսանք ընելէ:

Ավաճա՞, ըսաւ հիւրը, ամէն մարդ զիս ամէնէն երջանիկ կը սեպէ, ես վաճառական էի, մեծ հարստութիւն մը դիզեցի, բայց մէկ վայրկեան մը իսկ հանգիստ չէի, ամէն օր սնանկանալէ կը վախնայի, միշտ հոգի մէջ էի որ իմ վաճառքներս երբէք չաւուրին. ծովու վրայ ունեցած նաւերս չընկղմին և ես թողուցի գործերս և հանգիստ ըլլալ փորձելու համար իշխանին քով պաշտօն մը ունեցայ, նախ իշխանին հաճելի երեւնալու բարեբաղդութիւնն վայելեցի և իր մտերիմը եղայ, բայց վերջը հասկցայ թէ աւելի հըլու ծառայ մըն եմ քան թէ մտերիմ. ամէն վայրկեան ստիպուած էի զուարճութիւններս ձգելու և իրենինին հետեւելու. իշխանը որսորդութիւնը կը սիրէր, իսկ ես՝ հանգիստ կեանքը, սակայն ստիպուած էի անոր հետ անտառներուն մէջ վազվզել առաւօտէ մինչեւ իրիկուն. տուն կը դառնայի շատ յագնած, պառկելու յոյսով, բայց իշխանուհին պարահանդէս մը, խնջոյք մը կուտար և լուր կը խրկէր որ ես ալ ներկայ գտնուիմ. ուզէի չուզէի համակերպելու էի. իմ բոլոր մխիթարութիւնս ու վարձատրութիւնս իշխանին համակրանքը վայելելս էր: Գրէթէ տտանեւհինգ օր կայ՝ տէրս իր ծառաներէն մէկուն հետ շատ բարեկամարար խօսեցաւ, անոր երկու յանձնարարութիւն ըրաւ, և ըսաւ թէ պարկեշտ մէկն է. այս վայրկեանին աղէկ հասկցայ որ կորսուած էի, շատ գիշերներ աչք չգոցեցի:

Բայց ձկնորսը՝ հիւրին խօսքը ընդմիջելով ըսաւ. իշխանը ձեզի տիտուր դէմք մը ցցօնց և ձեզ այլ ևս չէ՞ր սիրէր:

— Ներողութիւն կը խնդրեմ, պատասխանեց հիւրը, իշխանն ինծի սովորականէն աւելի բարեկամութիւն ցցուց, բայց խորհեցէք որ մի միայն զիս չէր սիրեր, ամէն մարդ կ'ըսէր որ այս մարդը իշխանին երկ-

ընդ մտերիմը եղած էր, քիչ մնաց պիտի մեռնէի տրտմութենէս, երեկ իրիկուն սենեակիս մէջ առանձնացայ, շատ տխուր էի, և երբ սկսեցի լալ, յանկարծ տեսայ մեծ մարդ մը խիստ հաճելի դէմքով, որ ինձ ըսաւ. «Աղայէլ, գութն շաւիղեցաւ թըշուառութեանդ վրայ, կուզե՞ս հանդարտ ըլլալ, պատիւներու բաղձանքէն և հարստութեան սէրէն ետ կեցիր, այս տեղը թող, երկու օր քալէ առաջին անգամ առջևդ ելած ճամբով, մարդու մը հպարտութիւնը քեզ այնպիսի տեսարան մը կը պատրաստէ, որ քու հպարտութիւնդ բուժելու կարող է, երկու օր քալելէդ վերջը դարձիր, և ես հաստատ գիտեմ որ դուն ալ հանգիստ և խաղաղ կեանք մը պիտի ունենաս»։ Սրէն օր մը քալեցի այս խրատին հնազանդելու համար, և տակաւին վաղն ալ պիտի քալեմ, բայց ինծի խոստացած հանգստութիւնը վայելելու համար շատ պիտի աշխատիմ։

Ձկնորսը այս պատմութիւնը լսելով շատ զարմացաւ, տեսաւ որ մարդ մը իր երջանկութիւնը ուրիշի մը խօսքէն և նայուածքէն կ'սպասէր։ Ուրախ պիտի ըլլամ ձեզ տեսնելով և ձեր բժշկութիւնը լսելով, ըսաւ. աւարտեցէք ձեր ճամբորդութիւնը, և երկու օրուան մէջ վերադարձէք իմ խրճիթս։ Ես ալ հիմա քաղաք պիտի երթամ, ուր պիտի զուարճանամ կարծեմ եղած աղմուկներէն։

Շատ գէշ է այս խորհուրդդ՝ պատասխանեց ճամբորդը, քանի որ հիմա շատ երջանիկ էք, ինչո՞ւ համար դուք ձեզ թշուառ ընելու կ'աշխատիք այսօր ձեր խրճիթը ձեզի բաւական է, բայց երբոր փառաւոր տուններն տեսնէք, ձեր խրճիթը ձեզի շատ փոքր և շատ ողորմելի պիտի երեւայ, դուք ձեր հանդերձէն դո՛հ էք, որովհետեւ ձեզ կը ծածկէ, բայց երբ որ հարուստներուն փառաւոր զգեստները տեսնէք, ձեր ունեցածէն դժգոհ պիտի ըլլաք։

— Պարոն, ըսաւ ձկնորսը, աշխարհը լեցուն է այնպիսի մարդիկներով, որոնք ուրիշները կը խրատեն, մինչդեռ իրենք զիրենք չեն կրնար կառավարել։

— Ճամբորդը երբէք պատասխան չի տուաւ, որովհետեւ անքաղաքավարութիւն էր տանը մէջ հիւրնկալող մարդու դէմ խօ-

սիլը։ Հետեւեալ օրը ճամբորդը իր ճամբան չարունակեց, երբ ձկնորսն ալ իր ճամբորդութիւնը կ'սկսէր։

Երկու օր ետքը Աղայէլ որ արտաքոյ կարգի բանի մը հանդիպած չէր, խրճիթը վերադարձաւ, տեսաւ որ ձկնորսը իր դրան առջև նստած էր, գլուխը իր ձեռքերուն մէջ դրած և աչքերը գետինը տնկած։

— Ինչո՞ւ կը մտածէք, հարցուց անոր Աղայէլ։

— Կը մտածեմ որ չափէն աւելի խեղճ եմ, ըսաւ անոր մեր մարդը, Աստուծոյ ի՞նչ ըրի որ զիս այսչափ խեղճ ըրաւ, քանի որ աշխարհի մէջ հարուստ և գոհ մարդիկ շատ կան։

Այս վայրկեանիս այն մարդը՝ որ Աղայէլին երկու օր առաջ քալել հրամայած էր, և որ հրեշտակ մըն էր, երեցաւ ձկնորսին ու ըսաւ. «Ինչո՞ւ համար Աղայէլին խրատներուն չհետեւեցաք, քաղաքին չքեղ տեսարանները ձեր վրայ փառասիրութիւն յառաջ բերին, անոնք քու վրայէդ վերուցին սրտիդ հանդարտութիւնը և ուրախութիւններդ, բաղձանքներդ չափաւորէ, որ այս թանկագին օգուտները վայելես։

— Դուք մեծ մեծ կը ջարդէք, բայց ինձ համար անկարելի բան է, ըսաւ ձկնորսը, կ'զգամ որ միշտ թշուառ պիտի ըլլամ, մենչև որ Աստուած իմ վիճակս փոխել չհաճի։

— Աստուած երբեմն փառասէրներուն խնդիրքը կը կատարէ, ըսաւ հրեշտակը, բայց կը կատարէ վայն պատժելու համար։

— Է՛հ, քեզի ի՞նչ պէտք է, ըսաւ անոր ձկնորսը, եթէ միայն բաղձալով գործը լմննար, ձեր սպառնալիքները բնաւ բանի տեղ չէի դնել։

— Որովհետեւ դուն քեզ կորսնցնել կ'ուզես, պատասխանեց հրեշտակը, շատ աղէկ, կրնաս Աստուծմէ երեք բան խնդրել որ քեզ պիտի չնորհէ։

Ձկնորսը ուրախութենէն խենդենալով բաղձաց որ իր տնիկը մեծ չքեղ բնակարանի մը փոխուի, և ընդհուպ կատարուեցաւ խնդիրքը։ Ձկնորսը այս դէպքին վրայ զարմանալէն վերջը մտքէ անցուց որ իր դրան առջևի փոքրիկ դետակը մեծ ծովու մը փոխուի, ինչ որ մտքէն անցուցած էր, տեսաւ որ ուղածին պէս եղաւ, և անոր միայն

երրորդ բաղձանքը մնաց, բաւական ժամանակ մտածելէն ետքը՝ մաղթեց որ իր փոքրիկ նաւակը փառաւոր նաւու մը փոխուի ոսկի և աղամանդ բեռացած, խնայն մեր մարդը տեսաւ նաւը, հոն վազեց զարմամանալով այն հարստութեան վրայ, որոնց տէր եղած էր, բայց հազիւ հոն հասաւ. մեծ փոթորիկ մը ելաւ, ձկնորսը ուզեց ծովեզերքը ելլել, բայց ի դուր, յետոյ իր այս փառասիրութիւնը անիծեց. անսգո՛ւս վիշտեր, ծովը զայն կլլեց բոլոր իր հարստութեամբը:

Հրեշտակը ըսաւ Ազայէի. «այս օրինակը ո՛րչափ խելք կը սորվեցնէ ձեզի, այս մարդուն վերջը փառասէր մարդու մը վախճանն է. այն բնակարանը ուր դուն հիմա կ'ապրիս, մորիկներով և փոթորիկներով հռչակաւոր անհուն ծով մըն է:» Ազայէ վախնալով խոստացաւ հրեշտակին հնազանդելու, և իր խօսքը բռնեց, հոյակապ բնակարանը թողուց, և գիւղը բնակեցաւ, ուր կարգուեցաւ աղջկան մը հետ, որ իր գեղեցկութենէն և հարստութենէն աւելի առաքինի էր. փոխանակ իր հարստութիւնները շատցնել աշխատելու. ջանաց անկէ չափաւորութեամբ վայելելու և աւելորդն ալ աղքատաց բաժնելու, քիչ ատենէն գոհ և երջանիկ եղաւ, և օր մը շանցուց առանց Աստուծոյ շնորհակալ ըլլալու, որ իր երջանկութիւնը թունաւորող փառասիրութեանէն և ազահոլութենէն բժշկած էր զինքը:

Գ Ի Տ Ա Լ Ա Ն Վ Է Պ

Ժ Ի Ի Լ Վ Ե Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակութիւն Երկ քիւեհ)

է.

Ահա՛ այսպէս վերջացաւ սոյն յիշատակելի նիստը: Գլուխս ծանրացեր էր. քիչ մը պտտելու համար դուրս ելայ: Փողոցները նեղ կուգային, շունչս կը կտրէր, ուստի

դէպի Էլպայի եզերքները գացի՝ Համպուրկի երկաթուղիի կայարանին ու քաղքին միջեւ բանող շոգենաւին նաւամատոյցին կողմերը:

Քիչ մը առաջ լսածներէս համոզուած էի. միթէ Լիտէնպրոք ուսուցչապետին ազդեցութիւնը չէի՞ կրած. լուրջ բանի մը տեղ դնելու էի երկրիս կեդրոնը երթալու առաջարկը. խենթի մը մտազննութիւնը՝ թէ ոչ մեծ հանճարի մը գիտական հետեւութիւնները մոտիկ ըրա՛յ էի, Բոլոր ասոնց մէջ ո՛ւր կ'սկսէր ճշմարտութիւնը եւ ուր կը լըրանար սխալը: Հազարաւոր հակասական ենթադրութիւններու մէջ կը տատանէի առանց մէկուն կառչիլ կարենալու: Կը յիշէի որ համոզումս տրուած էր. բայց կ'ուզէի անմիջապէս մեկնիլ եւ խորհրդածութիւններով ժամանակ չկորսնցնել: Այո՛, այս վայրկեանին սնտուկս պատրաստելու համար քաջութիւնը չպիտի պակսեր ինծի:

Բայց ժամ մը վերջը գրգռումս հանդարտեցաւ. ջիւերս թուլցան, երկրիս խորերէն՝ երեսը բարձրացայ: «Խելքի դէմ է ասիկա, գոչեցի, ողջմտութենէ զուրկ է. խելացի մէկու մը առաջարկելիք բան չէ. բայց չէ՛, տեսածս երազ մըն է, գէշ քնացեր եմ:

Ասանկով Էլպայի եզերքէն վեր կ'ելլէի, մինչեւ Ալթօնայի ճամբան, բնազդն էր որ կը մղէր զիս, և չէի խաբուեր. քիչ մը վերջը կրաիւպէնը տեսայ որ թեթեւաքայլ Համպուրկի կը վերադառնար: «Կրաիւպէն, պօռացի հեռուէն, Աղջիկը կանգ առաւ, քիչ մը չփոթած, անշուշտ ամայի տեղ մը իր անունը լսելով: Տասը քայլով քովը հասայ: «Աքսէ՛լ, ըսաւ զարմացած: Ա՛հ, ինծի դիմաւորելու եկա՛ր: Աղէ՛կ, պարոն, աղէ՛կ»:

Բայց երեսո նայելով հասկցաւ որ մտատանջութիւն մը, տագնապ նկարուած էր դէմքիս վրայ:

— Ի՞նչ ունիս, հարցուց ձեռքը երկնցընելով:

— Կը հարցնե՞ս, գոչեցի, եւ երկվայրկեանի մը մէջ երկու բառով գեղանի Վիրլանտուհիս տեղեկացաւ գործին: Վայրկեան մը լուռ կեցաւ. չեմ գիտեր թէ սիրտը կը բարբախէ՞ր, բայց ձեռքը բնաւ չէր դողար մատներուս մէջ: Հարիւր քայլի չափ յառաջացանք այսպէս:

— Աքսէ՛լ, ըսաւ վերջապէս:

— Սիրելի՛ կրաիւպէնս:

— Աղուոր ճամբորդութիւն մը պիտի ըլլայ:

Կեցած տեղէս վեր ցատկեցի:

— Այո՛, Աքսէլ, գիտունի մը եղբորորդիին արժանի ճամբորդութիւն մը: Աղէկ չէ՞ որ մարդ նշանաւոր ըլլայ մեծ ձեռնարկով մը:

— Ի՞նչ, Կրաիւպէն, չե՞ս համոզեր ինծի որ ասանկ ուղեւորութենէ մը ետ կենամ:

— Ո՛չ, սիրելի Աքսէլ, ես ալ հօրեղբօրս ու քեզի ընկերանալ պիտի ուզէի եթէ ինծի պէս տկար աղջիկ մը աւելորդ նեղութիւն մը չըլլար:

— Իրա՞նք կ'ըսես:

— Այո՛:

Ա՛խ, Կինե՛ր, աղջիկնե՛ր, կանացի սիրտեր ուրոնք անհասկնալի կը մնան, երբ դուք արարածներուն ամէնէն վախկոտը չէ՞ք՝ է՛ն քաջասիրտը կը դառնաք: Ձեր քով բանականութիւնը գործ չունի: Այս աղջիկը ինծի սիրտ կուտար ուղեւորութեան ձեռնարկելու, ինքն իսկ չպիտի վարանէր մեզի միանալ: Ինծի կը մղէր, զիս՝ որ այնքան կը սիրէր:

Շփոթեր մնացեր էի, քիչ մըն ալ, ինչո՞ւ չըսեմ, կ'ամչնայի:

— Կրաիւպէն, յարեցի, նայինք վաղն ատանկ պիտի խօսի՞ս:

— Վաղը, սիրելի Աքսէլ, հիմախուան ըսածս պիտի ըսեմ:

Կրաիւպէն ու ես, ձեռք ձեռքի, լուռ ու մունջ ճամբանիս շարունակեցինք. կրած յուզումներէս ու ժառապաւ եղեր էի: « Ի՛նչ որ ալ ըլլայ, կը մտածէի Յուլիսը դեռ շատ հեռուն է, մինչեւ այն ատեն շատ՝ ու շատ պատահարներ կրնան հօրեղբայրս միտքը դրածը կատարելէ ետ կեցնել »:

Երբ ֆօնիկզկրասի տունը հասանք, գիշեր եղեր էր: Կը կարծէի որ ամէն բան հանդարտած պիտի գտնեմ. որովհետեւ այդ ժամուն հօրեղբայրս կը քնանար: Բայց կը սխալէի. դասախօսը կեցեր կը պօռար, կը կանչուընտէր խումբ մը մարդերու մէջտեղ որոնք մէյմէկ բան չալկած կը բերէին. ձերուկ սպասուէին շուարեր մնացեր էր:

« Ո՛ր ես, Աքսէլ, պօռաց հեռուէն հօրեղբայրս՝ շուտ եկուր, դեռ անտուկը չե՞ս կապեր, թուղթերս կարգի չես դրեր, պաշտակիս բանալին չկայ »:

Սարսափեցայ մնացի՛ ձայնս բռնուեցաւ,

հազիւ կրցայ քանի մը խօսք կմկմալ:

— Ի՛նչ, կը մեկնի՞նք:

— Այո՛, չար տղայ, կ'երթաս պտտելու հոս կենալու տեղ:

— Պիտի մեկնի՞նք, հարցուցի աւելի տըկար ձայնով մը:

— Այո՛, վաղը չէ միւս օր, առտուանց կանուխ:

Ա՛լ մօտիկ չկրցայ ընել. փախայ պզտիկ սենեակս քաշուեցայ, Տարակուսելու տեղ չկար: Հօրեղբայրս կէսօրէ վերջի բոլոր ժամանակը անցուցեր էր ճամբորդութեան հարկաւոր առարկաները գնելու: Տանը բալը լեցուեր էր ջուանէ սանդուղներով, երկաթապատ դաւազաններով, բրիչներով, երկաթէ կեռերով, վերջապէս ամէնը միասին տասը մարդու բեռ կ'ըլլար:

Սոսկալի գիշեր մը անցուցի. Յաջորդ առտուն կանուխ ինծի ձայն տուին. որոշած էի դուռս չբանալ, բայց ի՞նչպէս դիմադրել անուշիկ ձայնին որ «Սիրելիս Աքսէլ» կ'ըսէր:

Սենեակէս ելայ. կը մտածէի որ տակնուվրայ երեւոյթս, գունատ դէմքս, անքունութենէ կարմրեցած աչքերս Կրաիւպէնի գուլթը շարժեն:

— Սիրելիս Աքսէլ, ըսաւ, կը տեսնեմ որ ինքզինքդ գտեր ես, գիշերուան քունը հանդարտեցուցեր է քեզ:

— Հանդարտե՞ր եմ:

Վազեցի հայելիս նայեցայ. կարծածէս քիչ աւրուած էր դէմքս. չհաւատալս կուգար:

— Աքսէլ, ըսաւ Կրաիւպէն, խնամալիս հետ երկար բարակ տիւսակեցեցայ. յանդուգն գիտուն մըն է, անվախ սիրտ մը, անշուշտ պիտի յիշես թէ դուն ալ անոր սերունդէն ես: Ինծի բացատրեց ծրագիրները, յոյսերը, ինչո՞ւ և ի՞նչպէս հաւատալը թէ կրնայ երկրիս կեդրոնը հասնիլ, և պիտի հասնի ալ, ասոր վստահ եմ: Ա՛խ, սիրելիս Աքսէլ, ի՛նչ աղուոր է ինքզինքը գիտութեան համար գոհելը: Ի՛նչ մեծ պիտի ըլլայ Պր. Լիտէնպրօքի և իր ուղեկցին փառքը: Բո՛ւ դարձիդ, Աքսէլ, մարդ մը պիտի ըլլաս, իրեն հաւատարմ, ազատ պիտի ըլլաս խօսելու, գործելու, վերջապէս...

Գեղանի օրիորդը կարմրեցաւ ու ալ չի շարունակեց. Իր խօսքերը ինծի ոյժ տուին սակայն նորէն չէի ուզեր մեկնելնուս հա-

ւատալ: Կրախլպէնի հետ դասախօսին սեն-
եակը գացինք:

— Հօրեղբայր, ըսի, իրա՞ն է որ պիտի
մեկնինք:

— Կը հարցնե՞ս:

— Ո՛չ, ըսի դէմ խօսած չըլալու համար
բայց ինչո՞ւ այսչափ կ'աճապարենք:

— Բայց ժամանակը ի՞նչ չուտ կ'անցնի,
գիտե՞ս:

— Այսօր մայիսի 26ն է, մինչեւ յու-
նիսի վերջերը...

— Է՛հ, տգէտ պարոնս, կը կարծե՞ս որ
այդչափ դիւրաւ իսլանտա կ'երթան: Եթէ
երէկ խենդի պէս փախած չըլլայիր քովէս,
քեզի Քորէնհակի երթեւեկութեան գրա-
սենեակը կը տանէի, հոն պիտի տեսնէիր որ
Քորէնհակէն Ռէյքեավիք ամէն ամսի 22ին
միայն շոգենաւ մը կը բանի: Եթէ Յունիսի
22ին սպասենք շատ ուշ կը մնանք և Սքար-
թարիսի շուքին ո՛ւր իյնալը չենք կրնար
տեսնել: Ուստի կարելի եղածին չափ շու-
տով Քորէնհակ երթալու է: Գնա՛ սնտուկդ
կապէ:

Ի՞նչ պապասխանէի: Սենեակս ելայ,
Կրախլպէն ետեւէս եկաւ և առաջարկեց որ
պայուսակս ինք կարգի դնէ: Ինք բնաւ չէր
յուզուած, առանց աճապարանքի կը տե-
ղաւորէր պէտք եղած առարկաները ճամ-
բորդութեան պզտիկ սնտուկի մը մէջ, միւս
կողմէ ալ կը ջանար զիս համոզել: Շատ
բարկացայ իրեն դէմ, քանի մը անգամ քիչ
մնաց որ կռիւ բրցնէի, բայց նէ ականջ չէր
կախեր և գործը կը շարունակէր. վերջա-
պէս ամէն բան լմնցաւ և վար իջանք: Առ-
տուընէ մինչեւ իրիկուն բնագիտական գոր-
ծիքներու, դէնքերու, ելեքտրական սարք-
ուածներու հայթայթիչներ կ'երթային կու-
գային անդադար:

Դիչերը հասաւ. ժամանակը չեմ գիտեր
ինչպէս կ'անցնէր: «Վաղ առտու կանուխ,
ըսաւ հօրեղբայրս, ժամը 12ին կը մեկնինք»:
Ժամը գիշերուան չորսն էր անկողին նետ-
ուեցայ: Ամբողջ գիշերը խորխորատներ ե-
լազելով անցուցի. այնպէս կ'զգայի որ հօ-
րեղբորս ձեռքը կը քշէ զիս, անդունդներու
մէջ կը գլորիմ, և ողջ ողջ հողին տակ կը
թաղուիմ: Անյատակ գահավէժներու մէջ
կ'իյնայի՝ միջոցին մէջ իյնող մարմիններու
յարանուն արագութեամբ:

Ժամը տասնըմէկին արթնցայ, յոգնու-
թենէ ու յուզումէս նկուն: Սեղանատուն ի-
ջայ, հօրեղբայրս նստէր նախաճաշը կը լա-
փէր. սոսկումով իրեն նայեցայ, բայց Կրա-
խլպէն հոն էր, ուստի ձայն չհանեցի, ո՛չ
բերանս բան մը դրի: Տասնըմէկուկէսին
փողոցին մէջ անիւի ձայն առի. խոշոր կառք
մը դրան առջեւ կ'սպասէր մեզի Ալթօնայի
երկաթուղիի կայարանը տանելու համար:
Շուտ մը հօրեղբորս բոլոր ծրարները վրան
կապեցին:

— Ի՞նչ սնտուկդ ո՛ւր է:

— Պատրաստ է, ըսի վրաս մարելիք
գալով:

— Շո՛ւտ վար բեր, կառախումբը պիտի
փախցնենք:

Ճակատագրիս դէմ կռուիլ անկարելի ե-
րեւցաւ ինձի, սենեակս ելայ և սնտուկս
սանդուղին աստիճաններէն վար սահեցու-
ցի: Այս միջոցին հօրեղբայրս հանդիսաւոր
կերպով Կրախլպէնի ձեռքին մէջ կը դնէր
տանը կառավարութեան «սանձերը»: Գե-
ղանի Վիրլանտուհիս սովորական հանդար-
տութիւնը կը պահէր. գրկեց իր պաշտպանը
բայց երբ կարգը ինձի եկաւ, չկրցաւ ար-
ցունքի հատիկ մը զսպել՝ անուշ չըթները
այտիս դպցուցած ժամանակ:


— Կրախլպէ՛նս, գոչեցի:

— Գնա՛, Աքսէլ, գնա՛, ըսաւ, նշանածդ
կը ձգես հիմայ, դարձիդ ամուսինդ պիտի
գտնես:

Կրախլպէնը թեւերուս մէջ սեղմեցի եւ
կառք նստայ: Մարթա և գեղանի օրիորդը
դրան սեմէն վերջին երթաք բարով մը ըսին
և ձիերը քառատրոփ մեկնեցան Ալթօնայի
ճամբուն վրայ:

Թորգոմ:

ՁԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐՅԱՆ




Վեգլիւ Քեօփիլի Սահակեան վարժարանի
ուսուցիչ Յակոբ ԷՖ. Դաւթեանի մեզ ուղղած
ղեկսմ. 7 թուակիր նամակէն հետեւեալը կ'ար-
տասպենք:

«Բարեկամի մը կողմէ Հանրագիտակի ա-
ռաջին 3 թիւերը զրկուած էին ինձի. սոյն
թիւերը ցուցուցի վարժարանիս ուսանողաց,
միանգամայն յորդարելով որ բերել տան եւ

կարգան, ու այս կերպով թէ՛ իրենք օգտուին պարունակութենէն և թէ՛ քաջալերեն ձեր այս օգտաշատ ձեռնարկը, ասոնցմէ տասներեքն փափաք յայտնեցին բերել տալու. միայն թէ իրենց խնայած ստուկներէն չարաթը 10ական փարա վճարելով հայթայթին բաժնեգիրն, և երբոր բովանդակ բաժնեգիրն հաւաքուի, այն ատեն զրկուի բաց աստի իմ միջնորդութեամբ կը խնդրեն որ տարեկան 2 արծաթ մէճիտ բաժնեգիրն տան, կը յուսամ թէ կ'ընդունիք այս առաջարկը և ուսանող մատղաշ սերունդը կը քաջալերէք այս դոյզն գոհողութեամբ »:

Աւելորդ է ըսել թէ ընդունեցինք յարգելի ուսուցչին առաջարկն եւ հրապարակաւ կը խոստովանինք թէ՛ զաւառի դպրոցներու մէջ Մեծ ուսուցիչներն ու փոքրիկ ուսանողները աւելի կ'զգան ուսուցանելու եւ ուսանելու պէտքը եւ հանրօգուտ հրատարակութեան մը պէտք եղած քաջալերութիւնը տալը՝ ըլլայ իրենց խնայած տասնոցներով, քան Մայրաքաղաքի հազարաւոր ուսանողները իրենց ուղորմելի ընթացքով, որոնց շատերը փոխանակ 40 փարայ տալով Հանրապետական մը գնելու, թերեւ ծախողին 10 փարա վարձք վճարելով քանի մը հոգիներ կը կարգան ու ետ կուտան, որով մեծ վնաս կը պատճառեն մեզ, Հանրագիտակ բաժանորդ մուրալու պէտք չունի, բայց անշուշտ ներշնչէ իրեն ըզգածուի երբ կը տեսնէ որ զաւառի անխօսուկ մէկ անկիւնէն, աղքատիկ պատանիներ շատ աւելի պատուոյ զգացում ունենան Ասիկա սրտի ուրախութիւն կը պատճառէ, բան մը որ բաժանորդներու ցանկին վերայ 10-15 անուն ալ աւելցնելու չափ մեծ հաճոյք մըն է մեզ:



Փ Ո Ւ Ր Ի Ն

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋԻՆ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Հ Ե Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ն

Գ Լ Ո Ւ Խ Դ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

(Շար. Յոյ քիւեմ)

Հիւֆանսներու արեւաւմեր (2000 տարի՝ Ք.է առաջ) :— Եգիպտոս արդէն տասնըվեց ինքնագլուխ իշխանապետութեանց բաժնուած էր Տիմնաւոսի տիրապետութեան օրով՝ (2200 տարի՝ Ք.է առաջ). երբ Հիւքսոս

կոչուած հովիւներու հրոսակ մը Տէլդան և միջին Եգիպտոսը գրաւեց: Այս հովիւ տիրապետները կամ Հիւքսոսները Փարաւոն անունաւ Եգիպտոսի տասներեքերորդ իշխանապետութիւնը կազմեցին: Եւ հաւանական այն է որ ասոնցմէ միոյն առաջին նախարարն եղած ըլլայ Յովսէփ գեղեցիկ: Հիւքսոսները՝ հինգ դարու տիրապետութենէ մը յետոյ, Թէփէի թագաւորներէն յաղթուելով Եգիպտոսէն արտաքուսեցան (1700 տարի՝ Ք.է առաջ):

Տասներեքերորդ դարէն մինչեւ քսաներեքերորդ դար՝ Եգիպտոսի բարգաւաճումը:—



Փարաւոնի մը պատկեր

Հիւքսոսներու արտաքուսելէն յետոյ կ'սկսի Եգիպտոսի հազարաւոր տարիներու բարգաւաճում մը. նախ 18րդ իշխանապետութեան օրով (1703-1462), յետոյ 19րդի տիրապետաց օրով (1462-188). որոցմէ շատերը փառաւորապէս պանծացուցին Ռամսէս անունը: Սէթի Կմսէթոս Ա. որ իր յաղթական զէնքերով մինչեւ Փոքր-Ասիա առաջ խաղաց, կառոյց Քառնակայ մեծ Պալատը իր ընդարձակ ու բազմադահլիճ սրահներով և բացաւ Նեղոսէն մինչեւ Կարմիր ծով ջրանցք մը: Ռամսէս Բ. ալ զոր Յոյնք Սէստուրի կոչած են, ռազմարար ու շինարար թագաւորի համբաւ ունեցաւ. ան կանդնեց իպսանապուլի երկու շքեղ մեհեանները, Թէփէի Ռամսէս մը և Լիւգոսի յուրանաձեւ յաղթապանծ կոթողները որոնցմէ մի փարիզի ամենագեղեցիկ հրապարակի մը (Գոն-

գրառի) վարդը կը կազմէ: Այս ահագին յիշատակարանները կառուցանելու համար կը բանեցնէր իր բանաարկեալներն և իբրև գերի գործածած է Իսրայէլացիները: Եգիպտոսի տիրապետին խոտապահանջ վարմունքները գերիները ըմբոստանալու առաջադրեցին, և Ռամսէս Բ. ի որդւոյն Մէնափթաչի օրով՝ Եգիպտոսէն Եգիպտոսէն դուրս ելան:

Եգիպտոսի անկումը. Եթովպացւոց արշաւանքը. — 20րդ իշխանապետութիւնը կ'սկըսի Ռամսէս Գ. մեծանուն թագաւորին Սուտանի մէջ ըլլած իր քաջագործութիւններով: Բայց անորմէն յետոյ, յանկարծ կ'սկսի անկումը: Եգիպտոս հետզհետէ կը տկարանար որքան կը տարածուէր իր աշխարհակալութիւնները, դատարկապորտ ու հեղգարարոյ տիրապետներ կը յաջորդէին

ամբողջ երկրին վրայ (25րդ իշխանապետութիւն. 715-665), Եգիպտոսի մէջ օտարին լուծը թօթուելու համար ծագած յեղաշրջումը Սարահոնի երրորդ յաջորդը նորէն կ'օժտուի վանեց. և Սայիսի կամ Սայտար բնիկ իշխանական գերդաստան մը կազմեց 26րդ իշխանապետութիւնը (665) որուն պէտքը՝ Փսամէտիգոս ծանօթ է Հերոդոտոսի պատմութենէն:


Վերջին Փսամէտները. — Փսամէտիգոս կարիացի և Յոնիացի ծովահէններու օգնութեամբ յաջողեցաւ իշխանութեան բարձրանալ. բազմաթիւ ձայներ իրեն աջակից ըրաւ և փորձեց վերստին տիրել Սուրիոյ ուր առաւ Ազովթը 28 տարի յամառ պաշարումէ



Եգիպտացւոյ Ոսիրիս չաստուածք

փառապանծ Փարաւոններու, և Տէրութիւնը կը բաժնուի:

Ամանի մեծ քուրմը կը նստի Թէփէի արքայական գահուն վրայ. մինչդեռ 20րդ իշխանապետութիւնը կը թագաւորէ ի թանիս Տէրէաի մէջ, և օտարաց ազդեցութեան կ'ենթարկի: Այս թագաւորները ասորական անուններով կը յորջորջեն իրենք գիրենք. Սողոմոնի կանանոցին իրենց արիւնէն սերած իշխանուհիներ կուտան, և Լիբիական պահակազուններով մը կը շրջապատուին: Եթովպացիք օգտուելով այս բաժանումներէն և այս տկարութենէն, կը յարձակին Վերին Եգիպտոսի վրայ: Սարահոն կենդանւոյն կը խաբուկէ Պրքարիս Փարաւոնը (24րդ իշխանապետութիւն) և « Գուշեանց անարգ ցեղը » կ'իշխէ 50 տարի Փարաւոններու



Եգիպտական մոմիա

յետոյ: Իր յաջորդը՝ Նեքտիս շարունակեց ջրանցքը Կարմիր ծովուն և Նեգոսի մէջտեղ և Փլենիկեցի նաւավարներու ձեռք Ափրիկէի շուրջը ուղեորութիւն մը կատարեց: Լեմուսի իշխանութեան ատեն Եգիպտոս վերջին քայլ մ'ալ արձակեց: Այս իշխանը նաւկրատիս քաղաքը Յունաց տուաւ. դաշնակցեցաւ Մէտաց կամ Մարաց Աթաղհակ թագաւորին հետ, Բաբելոնի Պաղտասար թագաւորին հետ. բայց ինք ահաւ որ իր դաշնակցաց ամէնքն ալ Բերոտեաէ Պարսկաստանի լեռնականներուն հարուածոց տակ յաջորդաբար ընկճուեցան: Միևնոյն ճակատագիրը վերապահուած էր իր Փսամէնիդէ դաւակին որ վեց ամիս իշխելէն յետոյ (527) Պարսից Կիւրոս թագաւորին որդւոյն՝ Կամբիսի ձեռք նուաճուեցաւ: (Շառ.)

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ կը երոտարուի տմ. 6 մասոյ 1ին, 10ին եւ 20ին					
Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ		ԴԱՒԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ		Տարեկանը	45 դահեկան
Վեցամսեան	20 »			Վեցամսեան	25 »
Եռամսեան	10 »	Կ. ՊՈԼԻՍ		Եռամսեան	12 1/2 »
ՌՈՒՍՏՈՅ ՀԱՄԱՐ		ԷՍԿԻ ԶԱՊԹԻԷ ՃԱՏՏԷՍԻ		ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
Տարեկանը	4 բուպի	ԹԻՆ 61		Տարեկանը	10 ծրանք

Ձեռքէ կը ծախուի հաւար 40 փարսոյ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Նիկոմիդիա, Արժ. Ո. քհ. Ե. Գ. — Խորին շնորհակալութիւն ձեր սրտագին շնորհաւորութիւններուն համար: Ինչպէս յայտնի է, ամէն գործ իր թերութիւնները կ'ունենայ սկիզբները, մենք ալ կը խոստովանինք, բայց Զանադիր ենք հետզհետէ կատարելագործելու մեր ձեռնարկը և աւելի օգտակար հանդիսացնելու զայն: Թերթերն ուղղակի Ձեր ցուցուցած հասցէին կը ղրկուին: Դժբաղդաբար Տարեցոյց չհրատարակեցինք այս տարի:

Տիարպէֆիր, Լ. Ս. — Ստացանք նամակներդ, նոր բաժանորդին հասցէին ղրկեցինք 1-7 թիւերը:

Մարաւ, Արժ. Ղ. քհ. Տ. Ն. — Խորին շնորհակալութիւն, Բուրաստանի հին բարեկամ, որ չէք մոռցեր մեզի, ինչպէս որ մենք Ձեզի չէինք մոռցած: 1-7 թիւերը ղրկուեցան ձեր հասցէին: Յուսով ենք որ հին աչքով կը նայիք մեր նոր ձեռնարկին:

Խարբերդ, Ռ. Զ. — Մեծապէս շնորհակալ ենք ձեր ազնիւ ու սրտագին շնորհաւորութեանց համար, իսկ ձեր անկեղծ դիտողութեանց՝ կրկնակի երախտապարտ: Նոր բաժանորդներուն 1-7 զատ զատ գնաց:

Խարբերդ, Մ. Ս. Ո. — Ստացանք նամակներդ, շնորհակալ ենք ձեր անկեղծ դիտողութեանց մասին: Ձեր առաջարկած պայմանը Հանդէսիս համար չէ, քանի որ բաժանորդագրութիւնը մինչեւ եռամսեայի վերածած ենք, չառելէ լսուած իրաւացի գանդատներու տեղի չտալու համար: Բայց կ'ընդունինք, երկու օրինակ ղրկեցինք ձեր հասցէին:

Ամասիա, Հ. Խ. — Ստացանք նամակներդ: Թանձարարութիւններդ յաջորդ թրջթատարով կը ղրկուին:

Վեզիր Քօբրիւ, Յ. Ս. Դ. — Ներկայ թիւին մէջ կը տեսնէք: 1-7 ղրկուեցան: Ասանա, Յ. Տ. Գ. — Ստացանք քարդերներդ: Նոր բաժանորդներուն 1-7 ղրկուեցան: Ձեր ըրած յանձնարարութեան առաջինը մօտ ատենէն Հանդէսիս միջոցաւ ընելու մտադիր ենք: Միւսները մեր քով չեն գտնուիր:

17. — ՀԱՆԵԼՈՒԿ

Մարդու մը հետ դաշտէն կուգայ, Բերան չունի յեզու չունի, Գլուխ չունի, ձեռքեր չունի, Բայց մարդու հետ կը խօսի:

18. — ՀԱՆԵԼՈՒԿ

Ունի նա զգեստներ բազմատեսակ, Ինքն է յոյժ պճնասէր կոտակ (պզտիկ), Տէրն զայն բռնէ յոտից ու մերկացնէ, Յետ մերկացնելոյ դառնապէս կ'արտասուէ:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԴՈՐՄԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր Ասանա, Յակոբ էֆ. Պօղոսեան Աստիսպար, Ստեփան էֆ. Սափրիչեան Անիոն Դարանիսար, Աշոտ էֆ. Պազպաղեան Զմիւռնիա Կարապետ էֆ. Մալճանեան Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան Խարբերդ, Ռուբէն էֆ. Զարդարեան Հալեպ, Ս. էֆ. Ամատեան Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշեան Մարաւ, Արժ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան Մարգուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնեան Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան Սիմ հաճի Բոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնեան Վեզիր Քօբրիւ » » » » Տիարպէֆիր, Լեւոն էֆ. Սրապեան

ԱՐՏՕՆԱՏԷՐ — ԽՐԱԿՐԱՊԵՏ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ





Կուզե՞մք ձեր գաւազներուն սիրուն կանդանդէք մը նուիրել, դիմեցէք

Կ. Եսկրուեան եւ Յ. Իսագուլեան

Վաճառատունը, ուր Կադանդի առթիւ կը գտնուին գեղեցիկ եւ նաւակաւոր
տուփեր որոնց պարունակութիւնը ա՛լ անելի օգտակար է ու
առողջարար, թէ Ձեզի եւ թէ ձեր գաւազաց :

Հանրագիտակ ձեռքէ կը ծախուի Պոլսոյ մէջ հատը
40, իսկ գաւառաց մէջ 50 փարայ :